ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.12.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
ՍՑ-14/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.02.2016թ. թիվ 1/73-1/7376-16 գրությամբ ներկայացված «Որդի Տարոն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 08804722) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-14/16 բողոք), ինչպես նաև ՍՑ-ԳԲԽ-14/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 22.12.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԿԱ ոստիկանության 29.07.2015թ. թիվ 11/1648, 09.02.2016թ. թիվ 11/212 և 17.02.2016թ. թիվ 11/280 գրությունների հիման վրա, 29.02.2016թ. թիվ 1/73-1/7376-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել «Որդի Տարոն» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Միաժամանակ, Նախարարությունը ներկայացրել է «Որդի Տարոն» ՍՊԸ-ի վերաբերյալ Գավառի տարածքային հարկային տեսչության գրությունը, որի համաձայն՝ Ընկերությունը 15.06.2015թ. դրությամբ ունեցել է 2 313 940 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն (այդ թվում՝ շահութահարկ՝ 2 298 718 ՀՀ դրամ, բնապահպանական վճար՝ 15 222 ՀՀ դրամ), իսկ 18.06.2015թ. դրությամբ ունեցել է 1849120 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն (այդ թվում՝ շահութահարկ՝ 1 833 841 ՀՀ դրամ, բնապահպանական վճար՝ 15 279 ՀՀ դրամ):

2. «Որդի Տարոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-14/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

«Որդի Տարոն» ՍՊԸ-ն 15.12.2016թ. գրությամբ հայտնել է, որ հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ Ընկերությունը չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն: Ընկերությունը 2015թ. հունիսի 14-ին շահութահարկի գծով կատարել է 465 000 ՀՀ դրամի վճարում, այնուհետև Ընկերության հաշվապահը հայտնաբերել է, որ շահութահարկի գծով պարտավորությունը թերի է կատարվել և 2015թ. հունիսի 15-ին վճարվել է շահութահարկի գծով մնացած պարտքի գումարը՝ 1 835 000 ՀՀ դրամ՝ բանկի միջոցով: 15.06.2015թ. վերջին վճարումը կատարելուց հետո միայն «Որդի Տարոն» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից կազմակերպված ընթացակարգերին: Սակայն մի քանի օր անց պարզվել է, որ շահութահարկի գծով երկրորդ վճարումը տեղի չի ունեցել՝ բանկի վճարման հանձնարարականում տեխնիկական սխալ թույլ տալու պատճառով: Սխալը հայտնաբերելուց հետո Ընկերությունը կրկին վճարել է շահութահարկը:

«Որդի Տարոն» ՍՊԸ-ն խնդրել է չզրկել ընթացակարգերին մասնակցելու հնարավորությունից, քանի որ Ընկերության կողմից կեղծ տվյալ չի ներկայացվել, քանի որ 15.06.2015թ. կատարելով վերջին վճարումը վստահ է եղել, որ Ընկերությունը ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

«Որդի Տարոն» ՍՊԸ-ն վերը նշված գրությամբ կից ներկայացրել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի 14.06.2015թ. և 15.06.2015թ. վճարման հանձնարարագրերի պատճենները:

3. <u>ՀՀ ԿԱ ոստիկանության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ ԿԱ ոստիկանությունը 29.07.2015թ. թիվ 11/1648, 09.02.2016թ. թիվ 11/212 և 17.02.2016թ. թիվ 11/280 գրություններով ներկայացրել է «ՀՀ ԿԱ Ո-ՊԸԾՁԲ-2015/ԾՎ-01», «ՀՀ ԿԱ Ո-ՊԸԾՁԲ-2015/ՁՄ-2015» և «ՀՀ ԿԱ Ո-ՊԸԾՁԲ-2015/ՓԼ-2015» ծածկագրերով ընթացակարգերին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

<u>4. ՍՑ-ԳԲԽ-14/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 22.12.2016թ. եզրակացությունը և առաջարկել է ՀՀ ֆինանսների նախարարության 29.02.2016թ. թիվ 1/73-1/7376-16 գրությամբ ներկայացված «Որդի Տարոն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 08804722) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

<u>5. ՍՑ-ԳԲԽ-14/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 29.02.2016թ. թիվ 1/73-1/7376-16 գրությամբ ներկայացված «Որդի Տարոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական

ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. *ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ Ո-ՊԸԾՁԲ-2015/ՓԼ-2015» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ.*

• «Որդի Տարոն» ՍՊԸ-ն ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ Ո-ՊԸԾՁԲ-2015/ՓԼ-2015» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով՝ ***15.06.2015թ.*** ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունով, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

• Ընթացակարգի շրջանակներում «Որդի Տարոն» ՍՊԸ-ի վերաբերյալ Պատվիրատուի կողմից 18.06.2015թ. ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին կատարված հարցմամբ «հայտը ներկայացնելու ամսաթիվ» սյունակում նշվել է՝ 16.06.2015թ., մինչդեռ Ընկերությունը հայտը ներկայացրել է ***15.06.2015թ.***:

• Ի պատասխան 18.06.2015թ. հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Որդի Տարոն» ՍՊԸ-ն 16.06.2015թ. դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1,554,162 ՀՀ դրամի չափով:

• Նախարարությունը 29.02.2016թ. թիվ 1/73-1/7376-16 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել «Որդի Տարոն» ՍՊԸ-ի վերաբերյալ Գավառի տարածքային հարկային տեսչության գրությունը, որի համաձայն՝ Ընկերությունը 15.06.2015թ. դրությամբ ունեցել է 2,313,940 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն (այդ թվում՝ շահութահարկ՝ 2,298,718 ՀՀ դրամ, բնապահպանական վճար՝ 15,222 ՀՀ դրամ):

2. *ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ Ո-ՊԸԾՁԲ-2015/ԾՎ-01» և «ՀՀ ԿԱ Ո-ՊԸԾՁԲ-2015/ԾՎ-01» ծածկագրերով ընթացակարգերի վերաբերյալ.*

- «Որդի Տարոն» ՍՊԸ-ն ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ Ո-ՊԸԾՁԲ-2015/ԾՎ-01» և *«ՀՀ ԿԱ Ո-ՊԸԾՁԲ-2015/ԾՎ-01»* ծածկագրերով ընթացակարգերին մասնակցելու նպատակով՝ ***18.06.2015թ.*** ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունով, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:
- Ընթացակարգի շրջանակներում «Որդի Տարոն» ՍՊԸ-ի վերաբերյալ Պատվիրատուի կողմից 22.06.2015թ. ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին կատարված հարցմամբ «հայտը ներկայացնելու ամսաթիվ» սյունակում նշվել է՝ 17.06.2016թ., մինչդեռ Ընկերությունը հայտը ներկայացրել է ***18.06.2015թ.***:
- Ի պատասխան 22.06.2015թ. հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Որդի Տարոն» ՍՊԸ-ն 17.06.2015թ. դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1,551,838 ՀՀ դրամի չափով:
- Նախարարությունը 29.02.2016թ. թիվ 1/73-1/7376-16 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել «Որդի Տարոն» ՍՊԸ-ի վերաբերյալ Գավառի տարածքային հարկային տեսչության գրությունը, որի համաձայն՝ 18.06.2015թ. դրությամբ ունեցել է 1,849,120 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն (այդ թվում՝ շահութահարկ՝ 1,833,841 ՀՀ դրամ, բնապահպանական վճար՝ 15,279 ՀՀ դրամ):

3. Համաձայն՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի 14.06.2015թ. վճարման հանձնարարագրի «Որդի Տարոն» ՍՊԸ-ն կատարել է 465 000 ՀՀ դրամի վճարում՝ շահութահարկի գծով, իսկ 15.06.2015թ. վճարման հանձնարարագրի համաձայն՝ 1 835 000 ՀՀ դրամի չափով:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով ՍՑ-ԳԲԽ-14/16 բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է ***կեղծ տվյալ***:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված

որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Այսպիսով, «Որդի Տարոն» ՍՊԸ-ն ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից կազմակերպված ***«ՀՀ ԿԱ Ո-ՊԸԾՁԲ-2015/ԾՎ-01», «ՀՀ ԿԱ Ո-ՊԸԾՁԲ-2015/ՁՄ-2015» և «ՀՀ ԿԱ Ո-ՊԸԾՁԲ-2015/ՓԼ-2015»*** ծածկագրերով ընթացակարգերին մասնակցելու նպատակով՝ ***15.06.2015թ. և 18.06.2015թ.*** ներկայացրած հայտերի N 2 հավելվածներով՝ ընթացակարգերին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարություններով, հայտնել և հավաստել է, որ հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Մինչդեռ, Նախարարությունը 29.02.2016թ. թիվ 1/73-1/7376-16 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել «Որդի Տարոն» ՍՊԸ-ի վերաբերյալ Գավառի տարածքային հարկային տեսչության գրությունը, որի համաձայն՝ Ընկերությունը 15.06.2015թ. դրությամբ ունեցել է 2,313,940 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն (այդ թվում՝ շահութահարկ՝ 2,298,718 ՀՀ դրամ, բնապահպանական վճար՝ 15,222 ՀՀ դրամ), իսկ 18.06.2015թ. դրությամբ ունեցել է 1,849,120 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն (այդ թվում՝ շահութահարկ՝ 1,833,841 ՀՀ դրամ, բնապահպանական վճար՝ 15,279 ՀՀ դրամ):

Ընկերությունը 15.12.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ***15.06.2015թ. և 18.06.2015թ. դրությամբ (հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ) ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, քանի որ 14.06.2015թ. և 15.06.2015թ.*** «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի միջոցով վճարել է իր ունեցած հարկային պարտավորությունները և ներկայացրել է գնման գործընթացներին մասնակցելու հայտեր՝ համոզված լինելով, որ այլևս չունի որևէ պարտավորություն:

Ընկերությունը վերը նշված գրությամբ կից ներկայացրել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի 14.06.2015թ. և 15.06.2015թ. վճարման հանձնարարագրերի պատճենները, համաձայն որոնց՝ 14.06.2015թ. կատարվել է 465 000 ՀՀ դրամի վճարում շահութահարկի գծով, 15.06.2015թ.՝ 1 835 000 ՀՀ դրամի չափով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդն արձանագրում է, որ նման պայմաններում հնարավոր չէ հաստատել Ընկերության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացումը, քանի որ 14.06.2015թ. և 15.06.2015թ. կատարելով շահութահարկի գծով հարկային պարտավորության վճարը, «Որդի Տարոն» ՍՊԸ-ն իրավաչափորեն համոզված է եղել, որ հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ, այն է՝ ***15.06.2015թ. և 18.06.2015թ.***, չի ունեցել ***ժամկետանց*** պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային վճարների գծով:

Ինչ վերաբերում է «Որդի Տարոն» ՍՊԸ-ի 15.06.2015թ. դրությամբ ունեցած 15 222 ՀՀ դրամ բնապահպանական վճարի գծով պարտքին և 18.06.2015թ. դրությամբ ունեցած 15 279 ՀՀ դրամ բնապահպանական վճարի գծով պարտքին, ապա

Խորհուրդը հայտնում է, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի վերոհիշյալ դրույթի կիրառման առումով՝

1) հարկային պարտավորությունները սահմանված են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, համաձայն որի՝ «Հարկային պարտավորությունը ներառում է հարկերի (այդ թվում՝ թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված), ինչպես նաև հարկային օրենսդրությունը և ՀՀ հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարների վճարումը:

2) «ժամկետանց հարկային պարատավորությունը» համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի հավելված 1-ի 2.1-րդ կետի, սահմանված ժամկետում չկատարված հարկի (կամ հաստատագրված վճարի) գումարն է:

3) բնապահպանական վճարի գծով պարտավորությունները սահմանված են «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքով, որը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն հարկային օրենսդրության մաս չի կազմում:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդը հայտնում է, որ բնապահպանական վճարի գծով պարատավորությունը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի «հարկային պարտավորություն» հասկացության սահմանման իմաստով չի հանդիսանում հարկային պարատավորություն:

Այսպիսով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Որդի Տարոն» ՍՊԸ-ն գնման գործընթացի շրջանակում չի ներկայացրել կեղծ տվյալ՝ Խորհուրդը գտնում է, որ «Որդի Տարոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերն առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 29.02.2016թ. թիվ 1/73-1/7376-16 գրությամբ ներկայացված «Որդի Տարոն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 08804722) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Ոսկանյան Լուսինե**

Անդամ՝ **Խաչատրյան Լեոնիկ**